

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՈՐՑԱՆ

ՊԱՏԻՎ Ե ԼԻՆԵԼ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑԻԳ



մայնքում, կամ եկեղեցիներում, ուր գործում են կիրակնօրյա դպրոցներ: Մի խոսքով՝ հայ ընտանիքում կրթության հարցը առաջնահերթ է, որ երկրում էլ նրանք հանգրվանած լինեն:

Այդպես է նաև մեզ մոտ: Դռնում: Դռնի Նախիջևանի հայ համայնքում միշտ էլ գործել են տարբեր կիրակնօրյա դպրոցներ թե՛ եկեղեցիներին կից, թե՛ մասնավոր: Շատ-շատ երախտավորների անուններ գրված են համայնքի պատմության պատվո մատյանում:

Ավանդույթները շարունակվում են նաև այսօր: ...Մայիսյան այդ օրը հայոց լեզու դասավանդող ուսուցիչների հավաք-խորհրդակցություն էր հա-

մայնքում, կամ եկեղեցիներում, ուր գործում են կիրակնօրյա դպրոցներ: Մի խոսքով՝ հայ ընտանիքում կրթության հարցը առաջնահերթ է, որ երկրում էլ նրանք հանգրվանած լինեն:

մասին: Ներկաները քննարկեցին նաև Սփյուռքի նախարարության «Արի տուն» ծրագրով Հայաստան երեխաներ ուղարկելու հարցը:

Վերջում քննարկվեց նաև համայնքի կրթության ու մշակույթի ոլորտը հա-



Ահա և ավարտվեց 2018-2019 թթ ուսումնական տարին - լի բազմաթիվ իրադարձություններով թե՛ հայրենիքում, թե՛ դուրս հայրենիքից:

Հայտնվելով օտարության մեջ՝ մինչև տուն, բարեկեցություն, աշխարհք ունենալը հայն առաջին հերթին մտածում է, թե՛ ինչպես պիտի լուծվի իր երեխաների կրթության հարցը: Շատերը, չնայելով բազում դժվարություններին, ձգտում են բնակություն հաստատել մեծ քաղաքներում հանուն երեխաների որակյալ և բազմակողմանի կրթության: Իսկ ծնողների մի զգալի հատվածը առաջնահերթ խնդիր է համարում անմիջապես կապ ստեղծել տեղի հայ համայնքի հետ՝ հույս ունենալով գտնել կապ այն մարդկանց հետ, ովքեր զբաղվում են մայրենի դասավանդմամբ, հայ երգի ու պարի ուսուցմամբ, մի խոսքով՝ լեզվի ու մշակույթի տարածմամբ... Եվ այդ շփումը նրանք գտնում են կամ հա-



մայնքում: Կարելի է ասել, այս հավաքը միաժամանակ հաշվետվություն էր գործող խմբերի, հաճախող երեխաների, ծրագրերի ու դասագրքերի մասին: Բացման խոսքով ներկաներին դիմեց համայնքի գործադիր տնօրեն Մերգել Մայադովը:

րած աշխատանքները, խոսեցին նոր ծրագրերի ու դասագրքերի մասին, ծնողների հետ տարվող աշխատանքների մասին, ներկայացրեցին հաճախող երեխաների ցուցակները: Խոսք գնաց աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու, ավելի մեծ թվով երեխաներ ներգրավելու, բոլորին դասագրքերով և աշխատանքային տետրերով ապահովելու

մակարգող մեթոդիստ - կազմակերպիչ ունենալու հարցը: Մերգել Մայադովը ներկայացրեց համայնքի վարչության կողմից առաջարկվող թեկնածուին ներկաների միաձայն քվեարկությամբ այդ կարևոր գործի պատասխանատվությունը հանձնարարվեց սիրված մանկավարժ ու հասարակական գործիչ Լուսինե Պետանյանին:

Հուսանք, որ այսուհետ բոլորիս ջանքերով ավելի հաճախակի ու բազմաբնույթ կլինեն այն միջոցառումներն ու նախաձեռնությունները, որոնք ավելի հետաքրքիր ու բովանդակալից կդարձնեն հայոց լեզուն, հայ մշակույթը տարածողների և կրողների առօրյան:

Հաջողություններ և հայրենիքից ստացվող ուրախ լուրեր բոլոր նրանց, ովքեր առանց հերոսանալու ձգտման օտար երկրում կատարում են իրոք հերոսական աշխատանք՝ հպարտությամբ կրելով «Հայոց լեզվի ուսուցիչ» պատվավոր կոչումը:

ՀԱՅԵՐԸ ԴՐՍՈՒՄ

ՊԱՏՎԻՐԵԼ ԵՒ ՏԱՔՍԻ...

Պատվիրել էի տաքսի և սպասում էի... Քիչ անց ստացա հաղորդագրություն. «Ձեզ սպասում է № HHH - Կապույտ գույնի տաքսին»:

Շտապում էի: Արագ բացեցի դուռն ու նստեցի: Երբ շարժվեցինք, լսեցի հայերեն «Բարև Ձեզ»:

– Բարև Ձեզ, – կարծես նոր նկատեցի, որ դեկին կին է, և այն էլ հայուհի: Նա ծայտում էր ինձ իր խոշոր, սևորակ աչքերով: Կարծես հարյուր տարվա ծանոթներ լինեինք: Ճանապարհը շարունակվեց փոխադարձ հարցաքննություններով: Բաժանվեցինք հարազատների պես:

Այդ օրից տարիներ են անցել: Կապույտ տաքսին շարունակում է պանալ Ռոստոփի պողոտաներով և ծառայել մարդկանց ով էլ որ նրանք լինեն, ինչ ազգի էլ պատկանեն:

Մակայն լրագրողի իմ պարտքն էմ համարում թերթի ընթերցողներին ներկայացնել մի կյանքի պատմություն՝ իր տխուր և ուրախ շրջադարձերով, ավելի ճիշտ պատմել ինձ հանդիպած առաջին կին տաքսու վարորդի, հայուհի Անահիտ Ջարգարյանի մասին:

– Օսվել է Տավուշի մարզի Բերդ բնակավայրում, հասարակ աշխատավորի բազմանդամ ընտանիքում: Ամուսնացել է դպրոցն ավարտելուց անմիջապես հետո: Ունեցել են երկու երեխա՝ տղա և աղջիկ: 1991-ին որոշել են բախտ փնտրել Ռուսաստանում, նախ Մոսկուում, Մոսկ, ապա 1993-ին եկել են Դռնի Ռոստով:

– Դժվար ու ծանր տարիներ էին, – պատմում է Անահիտը, – երեխաները փոքր էին, աշխատանք, տուն, փաստաթուղթ չկար, գումարած օտարություն, լեզվական դժվարություններ... մի կերպ դիմանում էինք, հուսալով, որ ամեն ինչ լավ է լինելու: Ինչ գործ ասես չիորձեցինք, ինչի ասես ձեռ չգցեցինք: Շուտով, կարծես թե ամեն ինչ ուզում էր կարգավորվել և հանկարծ... 2001 թ. նոյեմբերին ավտովթարից մահացավ ամուսինս՝ Վաչեն... Ավելորդ են համարում պատմել այն ողբերգությունն ու ծանր վիճակը, որի մեջ հայտնվեցի ես:

Ամուսնուս հուղարկավորեցի Հայաստանում, մտածելով, որ այստեղ ես էլ անելիք չունեմ (երեխաներս 10 և 6 տարեկան էին):

Հայաստանում նույնպես չստացվեց... ամեն ինչ սկսվել գրողից... ստիպված հետ եկա Ռոստով ինքս ինձ տեր կանգնելով, երդվեցի և խոստացա. «Ես պիտի հաղթեմ մահին, օտարությանը, անհաջողությանը»:



Շուտով տուն վարձեցի, երեխաներիս դպրոցի հարցը կարգավորեցի, անցա աշխատանքի էլ դպրոցում հավաքաբար, էլ շուկայում վաճառող, էլ հարուստների տները մաքրող...

Մասնակցեցի խոհարարության մեջ և երկար տարիներ աշխատեցի սպասարկման ոլորտում:

Այդ ընթացքում ծանր վիրահատություն տարա... որից հետո որոշեցի տաքսի վարել... Եվ ահա տաքսի են վարում արդեն 5 տարի:



խաչմերուկի անըմբռնելի լուսացույցի տակ, մեկ վտանգավոր շրջադարձի մեջ, մեկ էլ հարթ մայրուղու վրա:

– Երբ բոլոր դռները փակվում են և հերթով քեզ լքում են մտերիմներդ՝ հիշում ես ամենահավատարիմ բարեկամիդ և դիմելով նրան ամեն բացվող առավոտ ասում ես. «Փառք շատ, Տեր Աստված»:

Լսելով Անահիտի պատմությունը, որը կարող են կիսել օտարության մեջ հայտնված մեր շատ հայուհիներ, ուզում եմ հարցնել.

– Իմ սևայա գեղեցկուհիներ, իմ խոնարհ հարսներ, իմ գործվագույթ մայրեր, որտեղից այս գերբնական ուժը ձեր փխրուն ուսերին ու բյուրեղյա հոգու մեջ... Այն դարեր շարունակ ապրեցրել է մեզ, եղել է, կա ու կլինի իմ ժողովրդի կենսատու երակը:

...Այսօր էլ կապույտ տաքսին շարունակում է պանալ Ռոստոփի պողոտաներով և ծառայել մարդկանց ով էլ որ նրանք լինեն, ինչ ազգի էլ պատկանեն:

Չգ. Մայիսյան այդ օրը կապույտ տաքսին սպանում էր դեպի օդանավակայան. Անահիտը գնում էր դիմափորելու Հայաստանից՝ եկող իր տղային ու նորահարսին և շփոթում՝ ուրախ ու հուզված. «Փառք շատ, Տեր Աստված»:

Էջը պատրաստեց՝ Սոնա ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ